«Այդի Բանկ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող. 13
Գանձապետարան, Արժեթղթերով գործառնությունների բաժին
Հեռ.՝ +374 10 593333, ներքին (3275, 3505)
Կայք՝ www.idbank.am

Հաստատված է
«Այդի Բանկ» ՓԲԸ Վարչության
10/09/2026 թվականի N 380 -Լ որոշմամբ
Գործում է սկսած 14/09/2026-թ.-ից

Հավելված 1

Ներդրումային Ծառայությունների Մատուցման

Տեղեկատվական Ամփոփագիր

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցում է ներդրումային (բրոքերային) ծառայություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Բանկի ներքին իրավական ակտերով և համապատասխան պայմանագրերով սահմանված կարգով:

Սույն տեղեկատվական ամփոփագրում ներկայացվում են Բանկի կողմից մատուցվող ներդրումային ծառայությունների տեսակները, արժեթղթերով և այլ ֆինանսական գործիքներով գործառնությունների իրականացման պայմանները, ինչպես նաև այդ ծառայությունների մատուցման համար սահմանված սակագները, միջնորդավճարները, ծախսերը, վճարները և հնարավոր լրացուցիչ գանձումները:

Բանկն իրավունք ունի առանձին գործարքների, ֆինանսական գործիքների կամ շուկաների համար կիրառել պայմանագրային կամ անհատապես համաձայնեցված սակագներ՝ համաձայն Բանկի և հաճախորդի միջև ձեռք բերված պայմանավորվածությունների:

Արժեթղթերով գործառնությունների իրականացման սակագներ

1. Հաշիվների բացում և սպասարկում

Դեպո / արժեթղթերի հաշվի բացում	Անվճար
Բրոքերային հաշվի բացում	Անվճար
Արժեթղթերի հաշվի տարեկան սպասարկում	Անվճար
Միջոցների մուտքագրում / ելքագրում ID Bank հաշիվների միջև	Անվճար
Էլեկտրոնային քաղվածք	Անվճար
Թղթային քաղվածք	1,000 ՀՀ դրամ / մինչև 1 տարի
	2,000 ՀՀ դրամ / 1 տարուց ավելի

2. ՀՀ Շուկա

ՀՀ պետական պարտատոմսեր՝ առաջնային շուկա	0.05%, նվազագույնը 5,000 ՀՀ դրամ
ՀՀ պետական պարտատոմսեր՝ երկրորդային շուկա	0.07%, նվազագույնը 5,000 ՀՀ դրամ
ՀՀ ռեզիդենտ կորպորատիվ պարտատոմսեր	0.05%, նվազագույնը 5,000 ՀՀ դրամ
ID Bank-ի կողմից թողարկված պարտատոմսերի առաջնային տեղաբաշխում	Անվճար
	0.05% / մինչև 100 մլն ՀՀ դրամ

ID Bank-ի կողմից թողարկված պարտատոմսերի երկրորդային առք / վաճառք	0.04%, / 100 մլն ՀՀ դրամից բարձր գործարքներ
ՀՀ բաժնետոմսեր	0.10%, նվազագույնը 10,000 ՀՀ դրամ

**Ֆինանսական ոչ բանկային կազմակերպությունների համար՝ պայմանագրային*

**Բացառությամբ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից սահմանված բացառությունների*

3. Միջազգային Շուկաներ

3.1 Հյուսիսային Ամերիկա

ԱՄՆ՝ NYSE, NASDAQ, AMEX, ARCA, BATS	0.015 USD մեկ արժեթղթի համար, նվազագույնը 20 USD
ԱՄՆ OTC	0.03 USD մեկ արժեթղթի համար, նվազագույնը 20 USD
Կանադա	0.02 CAD մեկ արժեթղթի համար, նվազագույնը 20 CAD

3.2 Եվրոպա և Մեծ Բրիտանիա

Ավստրիա (VSE)	0.20% գործարքի ծավալից — 20 EUR
Գերմանիա (FWB)	0.60% գործարքի ծավալից — 60 EUR
Գերմանիա (XETRA)	0.15% գործարքի ծավալից — 20 EUR
Դանիա (OMXC)	0.15% գործարքի ծավալից — 40 DKK
Իսրայել (TASE)	0.40% գործարքի ծավալից — 20 ILS
Իսպանիա (BM)	0.20% գործարքի ծավալից — 15 EUR
Իտալիա (MIL)	0.20% գործարքի ծավալից — 20 EUR
Լեհաստան (WSE)	0.50% գործարքի ծավալից — 20 PLN
Հունաստան (ATH)	0.40% գործարքի ծավալից — 20 EUR
Մալթա (MSE)	0.20% գործարքի ծավալից — 15 EUR
Մեծ Բրիտանիա (LSE, LSEIOB)	0.15% գործարքի ծավալից — 20 USD
Մեծ Բրիտանիա (LSEAIM)	0.15% գործարքի ծավալից — 20 USD
Նիդերլանդներ (EURONEXT)	0.15% գործարքի ծավալից — 20 USD
Նորվեգիա (OSE, NOMX)	0.15% գործարքի ծավալից — 60 NOK
Շվեդիա (SOMX)	0.15% գործարքի ծավալից — 70 SEK
Շվեդիա (SB)	0.30% գործարքի ծավալից — 40 SEK
Շվեյցարիա (SIX)	0.15% գործարքի ծավալից — 20 USD
Չեխիա (PSE)	0.60% գործարքի ծավալից — 20 CZK
Ֆինլանդիա (OMXH)	0.15% գործարքի ծավալից — 20 USD

3.3 Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան

Հոնկոնգ	0.25%, նվազագույնը 100 HKD
Ճապոնիա	0.25%, նվազագույնը 1,500 JPY
Ավստրալիա	0.25%, նվազագույնը 15 AUD
Սինգապուր	0.25%, նվազագույնը 15 SGD

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող. 13
Գանձապետարան, Արժեթղթերով գործառնությունների բաժին
Հեռ.՝ +374 10 593333, ներքին (3275, 3505)
Կայք՝ www.idbank.am

3.4 Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան

UAE / ADX բաժնետոմսեր	0.25%, նվազագույնը 20 USD
GCC բաժնետոմսեր	0.30%, նվազագույնը 25 USD
GCC / UAE ETF-ներ	0.25%, նվազագույնը 20 USD

3.5 Այլ միջազգային շուկաներ և հատուկ գործարքներ

Այլ շուկաներ	Պայմանագրային հիմունքներով
Թրեյդերի միջոցով կատարվող միջազգային բաժնետոմսերի գործարքներ	Ստանդարտ սակագին + 50 USD կամ համարժեք գումար յուրաքանչյուր գործարքի համար

3.6 Ածանցյալ գործիքներ

Ֆյուչերսներ	Պայմանագրային հիմունքներով
Օպցիոններ	Պայմանագրային հիմունքներով

4. Միջազգային պարտատոմսեր

ԱՄՆ պետական պարտատոմսեր	0.15%, նվազագույնը 50 USD
Եվրոբոնդեր	0.2%, նվազագույնը 50 USD
Կորպորատիվ պարտատոմսեր	0.15%, նվազագույնը 50 USD
Զարգացող շուկաների պարտատոմսեր	0.25%, նվազագույնը 20 USD/EUR
Sukuk / տարաձաշրջանային պարտատոմսեր	0.2%, նվազագույնը 20 USD
Խնդրահարույց ակտիվներ (Distressed assets)	Պայմանագրային

- *Միջնորդավճարները գանձվում են Հաճախորդի հաշվից գործարքի իրականացման պահին՝ առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության:*

- *Արտարժույթով սահմանված միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով՝ գործարքի իրականացման պահին ՀՀ ԿԲ կողմից հրապարակված արտարժույթի միջին փոխարժեքով:*

- ***Ոչ ռեզիդենտ Հաճախորդների համար*** *կիրառվող սակագները սահմանվում են պայմանագրային հիմունքներով:*

5. ՀՀ Պետական պարտատոմսերի արգելադրում, արգելանքից հանում, գրավադրում, գրավից ազատում

Արժեթղթերի արգելադրում, արգելանքից հանում, գրավադրում, գրավից ազատում	1,000ՀՀ դրամ

Բանկի հետ կնքած բրոքերային գործարքի արդյունքում	անվճար
Արժեթղթերի դիմաց եկամուտների ստացում, հաշվարկում, մուտքագրում հաճախորդի հաշվին	անվճար
Հաճախորդների պահանջով քաղվածքների և տեղեկանքների տրամադրում՝ անկախ գործարքի իրականացման վաղեմության ժամկետի	500 ՀՀ դրամ

«Ոչ պետական արժեթղթերով պահառության ծառայությունները մատուցումն իրականացվում է համաձայն Բանկի միջնորդությամբ Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից մատուցվող Ռեեստրավարման և Պահառության Ծառայությունների Սակագների Մասին Կանոնների հետևյալ ***հղումով***

Հաճախորդների հետ հաղորդակցման և գործարքների իրականացման կարգը

Հաճախորդին քաղվածքները, սակագների և գործարքների իրականացման պայմանների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրվում են առձեռն, հեռախոսով, փոստով, էլեկտրոնային փոստով կամ Բանկի կայքի միջոցով՝ Հաճախորդի պահանջով, Բանկի կողմից սահմանված ժամկետներում կամ համապատասխան անհրաժեշտության դեպքում: Սխալների կամ անճշտությունների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է դրանց հայտնաբերման դեպքում:

Հանձնարարականների և հարցումների ներկայացում

Հաճախորդը գործարքների պայմանների վերաբերյալ հարցումները, գործարքների իրականացման հանձնարարականները և դրանց հաստատումները կարող է ներկայացնել Բանկ ներկայանալու և համապատասխան հայտ լրացնելու, էլեկտրոնային փոստի կամ հեռախոսազանգի միջոցով՝ Պայմանագրով սահմանված կարգով:

Գումարների ապահովում

Գործարքի իրականացումից առաջ Հաճախորդը պարտավոր է իր հաշվին ապահովել գործարքի իրականացման համար անհրաժեշտ միջոցների առկայությունը:

Պայմանագրի ժամկետը և դադարեցումը

Պայմանագիրը կնքվում է անժամկետ և կարող է դադարեցվել կողմերի համաձայնությամբ՝ Պայմանագրով սահմանված կարգով: Պայմանագրի դադարեցման դեպքում Հաճախորդի միջոցները վերադարձվում են Հաճախորդի հանձնարարականի համաձայն:

Ռիսկեր և շահերի բախում

Ներդրումային ծառայությունների հետ կապված հիմնական ռիսկերի, ինչպես նաև պատվերների և հանձնարարականների ընդունման ու կատարման կարգի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Բանկի «Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման ընթացակարգում»: Շահերի բախման կանխարգելման և կառավարման գործընթացներն իրականացվում են Բանկի ներքին

քաղաքականություններին և «Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման ընթացակարգին» համապատասխան:

Ուշադրություն.

Արժեթղթերում կատարվող ներդրումները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, չեն երաշխավորվում ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, և դրանց հետ կապված շուկայական ու այլ ռիսկերը կրում է Հաճախորդը: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի այն վնասների համար, որոնք առաջացել են Հաճախորդի կողմից ներկայացված պատվերի պայմաններին համապատասխան գործարքի պատշաճ կատարման արդյունքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ կամ Պայմանագրով: Բանկը ֆիզիկական անձանց մասով հանդես է գալիս որպես հարկային գործակալ և իրականացնում է հարկերի հաշվարկումն ու վճարումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: